# “Ժպիտ” Շուրթի և քիմքի ճեղքվածք
## Կերակրման խորհուրդներ

**1** **Որոշ երեխաներ ծնվում են շուրթի ճեղքվածքով** – դա անցք կամ ճեղք է նրանց վերին շուրթում, կամ ճեղք վերին ծնոտում (որը կարող է անտեսանելի լինել արտաքինից).



**2** **Վիրահատությունը շատ կարևոր է,** քանի, որ առանց դրա երեխան չի կարող ճիշտ խոսել, նա կարող է վարակների հանդեպ ավելի մեծ վտանգի ենթարկվել և կարող է կաթ կամ սննունդ ընդունելու դժվարություններ ունենալ.

**3** **“Ժպիտի” վիրաբույժը անվճար կշտկի այդ թերությունը** իր գործընկեր հիվանդանոցում: Վիրահատությունը միակ միջոցն է այդ թերությունը լիարժեքորեն վերացնելու համար.

**4** **Վիրահատությունը անցնելու նպատակով** բավարար կերպով առողջ և ուժեղ լինելու համար կարևոր է, որ ճեղքվածքով երեխաները պատշաճորեն կերակրվեն

**5** **ՍԱԿԱՅՆ – երբեմն դժվար է կերակրել ճեղքվածքով երեխաներին,** քանի որ կաթը կարող է դուրս թափվել քթանցքից կամ անգամ լցվել թոքերը: Կամ երեխաները կարող են օդ կուլ տալ և կուշտ լինելու զգացողություն ունենալով քնել, չնայած այն փաստի, որ բավարար քանակով սնունդ չեն ստացել.

**6** **Կարևոր է, որ երեխան լավ սնունդ ստանա, որպեսզի կարողանա վիրահատվել:** Մայրերը պետք է տարբեր եղանակներ փորձեն, իրենց երեխայի համար լավագույնը գտնելու համար: Հնարավորության դեպքում լավագույն տարբերակը անմիջապես կրծքով կերակրելն է: Որոշ եղանակները հետևյալն են՝

Կերակրեք երեխային ուղիղ նստած դիրքում

Տեղադրեք պտուկը բերանի ոչ կտրված կողմում



Նրբորեն սեղմեք կուրծքը՝ մեծացնելով կաթի հոսքը

Սովորականից ավելի հաճախ կերակրեք և բղկացրեք երեխային

**7** **Եթե կրծքով կերակրումը անհնար է.** շատ կարևոր է, որ մայրը շարունակի կերակրել երեխային այլ միջոցներով: Որոշ եղանակները հետևյալն են՝

Մայրը կարող է կթել կրծքի կաթը և կերակրել այն երեխային գդալով կամ շշով

Մայրը կարող է ԹԵԹԵՎԱԿԻՈՐԵՆ մեծացնել կերակրման շշի ծծակը՝ կաթի հոսքը ուժեղացնելու համար

**8** **Եթե կրծքի կաթը որևէ կերպ հասանելի չէ,** մայրը կարող է օգտագործել կովի կամ արհեստական կաթ: Հանոզվեք, որ այդ կաթը կամ արհեստական կերի համար ջուրը եռացված և սառեցված են:

**9** **Համոզվեք, որ սննդի համար օգտագործվող որևէ տարա** մաքուր է և ստերիլիզացված առնվազն 10 րոպե եռալու միջոցով: Ոչ մաքուր գդալներն ու շշերը կարող են տենդի կամ վարակի հանգեցնել.

**10** **Մի մոռացեք տանել երեխային մոտակա “Ժպիտ” կենտրոն:** Կենտրոնի բժիշկը կզգնի Ձեր երեխային և կասի երբ գաք հիվանդանոց վիրահատության համար:

Հիշեք, ճեղքվածքի ցանկացած բուժում ամբողջությամբ անվճար է “Ժպիտի” ցանկացած կենտրրնում: